ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 123
վարչական տուգանք նշանակելու մասին

23 մարտի 2018թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) պետ Իշխան Կարապետյանս, քննելով «ՏՈՒԿԱՍԱ» ՍՊԸ տնօրեն Թելման Հայրապետյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Ծառայության պետի 2017 թվականի սեպտեմբերի 6-ի N 662-17 հրամանի համաձայն՝ «ՏՈՒԿԱՍԱ» ՍՊԸ-ում իրականացված դիտարկման ընթացքում արձանագրվել են մակնշման անհամապատասխանություններ: Որի հիման վրա 2017 թվականի սեպտեմբերի 13-ին Ծառայության վերահսկողություն իրականացնող տեսուչների կողմից տրվել է «Արտադրանքի իրացումը կասեցնելու մասին» N 662-17 կարգադրագիրը և կասեցվել է արտադրանքի իրացումը, մինչև հայտնաբերված խախտումները վերացնելը՝ խախտումների վերացման համար կատարման ժամկետ սահմանելով մինչև 2017 թվականի նոյեմբերի 2-ը:

Սակայն՝ կազմակերպությունը չի կատարել և անտեսել է Ծառայության տեսուչների կողմից տրված 2017 թվականի սեպտեմբերի 13-ի «Արտադրանքի իրացումը կասեցնելու մասին» N 662-17 կարգադրագրի պահանջները՝ պիտակների փոփոխված տարբերակները չի ներկայացրել Ծառայություն, ինչի արդյունքում խախտել է «**Սննդամթերքի անվտանգության պետական վերասկողության մասին**» **ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի** պահանջները:

Այսպիսով, հաստատվել է, որ սույն վարչական գործով առաջացած իրավախախտման համար պատասխանատու է «ՏՈՒԿԱՍԱ» ՍՊԸ տնօրեն Թելման Հայրապետյանը (հասցե՝ ք.Երևան, Կոմիտասի պողոտա, շ.38., բն.5): Թելման Հայրապետյանը վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամի մասին պատշաճ կարգով ծանուցվել է և մասնակցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ, 238[2]-րդ, 279-րդ, 281-րդ հոդվածներով և 188-րդ հոդվածի 4-րդ մասով՝**

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. «ՏՈՒԿԱՍԱ» ՍՊԸ տնօրեն Թելման Հայրապետյանի նկատմամբ նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրութսունապատիկի չափով՝ 280.000 (երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

2. Տուգանքը վճարել թիվ 900005242822 գանձապետական հաշվին, **Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 305-րդ հոդվածի** համաձայն՝ որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքն առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Տուգանքի վճարումն ապացուցող բանկային անդորրագրի պատճենը սեղմ ժամկետում ներկայացնել ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի իրավաբանական վարչություն:

3. Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը իրականացվում է՝ համաձայն **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի**:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով **«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով** սահմանված ժամկետում (երկու ամսվա ընթացքում):

ՀՀ ԳՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կ.Տ.

????? ??????????